է, և ընդհարումը անխուսափելի է թւում, եթէ ձեռք չառնուեն արտակարգ միջոցներ»։

Ազգ. Խորհուրդը երկար քննութիւնից յետոյ որոշեց. 1) Ձեռք առնել բոլոր միջոցները, որ ընդհարում տեղի չունենայ՝ ազդելով երկու կողմերի վրա։ 2) Եթէ անհնար եղաւ ընդհարման առաջն առնել, ձեռք առնել բոլոր ինքնապաշտպանողական միջոցները, որ հայ ազգաբնակութիւնը ընդհարման ժամանակ չտուժէ։

Երեկոյեան դէմ, ժամը 6-ին, չնայած ձեռք առնուած բոլոր միջոցների, սկսուեց հրացանաձգութիւն։ Կռիւը սկսողը եղան թուրքերը Շեմախինկայում,*) ուր յարձակում գործեցին կարմիր գւարդիայի մի խմբի վրա։ Այդ ազդանշան եղաւ կռուի՝ ամբողջ քաղաքում։ Շուտով սկսեցին կրակել և թնդանօթները նաւերից։ Նկատի ունենալով, որ սկսած արիւնահեղ կռիւը անխուսափելիօրէն կարող է աղէտաւոր հետևանքներ ունենալ ամբողջ քաղաքի համար, Խորհուրդը իր արտակարգ նիստում որոշեց մի անգամ ևս միջամտել՝ ազդելու համար երկու կողմերի վրա, որ դադարեցնեն կռիւը։

Որոշեց յանձնարարել նախագահին (Ա. Գիւլխանդանեան), Ս. Արարատեանին և Ն. Տէր-Ղազարեանին՝ խօսելու այդ նպատակով Զինու.-Յեղափ. Կոմիտէի հետ, իսկ բժ. Լ. Աթաբէգեանին, Տ. Իսախանեանին, Հ. Տէր-Միքայէլեանին և Ա. Զիլինգարեանին խօսել Թուրքական կոմիտէի հետ»։

«Յաջորդ (մարտ 20-ի) նիստում զեկուցում են ընտրուած երկու պատուիրակութիւնները իրենց առաքելութեան անյաջողութեան մասին։ Պարզւում է արդէն, որ Յեղափ. Կոմիտէի զօրքերը ամբողջ դծի վրա առաջ են շարժւում, և թուրքերը նահանջում են սարսափահար։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքում հաւաքւած չատ հայ անկազմակերպ զինուորներ և մասամբ Ազգ. Խորհրդին ենթակայ որոշ հայ զինուորներ տարերային կերպով մղում ունեն մասնակցելու կռուին, որոշեց ամենակտրուկ միջոցները ձեռք առնել, որ Ազգ. Խորհրդին ենթակայ ո՛չ մի զինուոր չմասնակցի կռուին, և բոլոր հայկական զօրամասերը մնան ինքնապաշտպանողական դերի մէջ։

2) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կռուի ժամանակ բազմաթիւ անմեղ թուրքեր ենթարկւում են յարձակման և որ այդ կատարւում է հայկական թաղամասում, յաճախ, հայ զինուորների կողմից, որոշեց կտրուկ միջոցներ ձեռք առնել հայ թաղամասերում ապրող կամ ապաստանած թուրքերին Խորհրդի հովանաւորութեան տակ առնելու։ Այդ նպատակով որոշեց նշանակել Դ. Անանունին ընդհանուր հոգաբարձու և լիազօրութիւն տալ նրան հաւաքելու թուրքերին որոշ ապահով տեղերում ու խնամել նրանց, մինչև որ վտանգը կը վերանայ, որից յետոյ բոլորն էլ կը փոխադրւեն թուրքական մասը։ Այդ նպատակով պէտք եղած զինուորական ուժը Ազգ. Խորհուրդը որոշեց տրամադրել հոգաբարձուին։ Եթէ պատսպարւած թուրքերի վրա որև է յարձակում լինի, որոշեց դիմել ծայրայեղ միջոցների՝ կանգ չառնելով նոյնիսկ զէնքի գործածութեան առաջ»։

«Յերեկւայ ժամը 3-ին թուրքերը ընդունեցին Զինու.-Յեղափ. Կոմիտէի վերջնագիրը։ Հաշտութեան նպաստելու համար որոշեց յանձնարարել Ս. Արարատեանին գնալ Զինու.-Յեղափ. Կոմիտէ, ներկայ լինել հաշտութեան կնքման ժամանակ և հարկ եղած աջակցութիւնը ցոյց տալ հաշտութեան գործը դիւրացնելու համար։ Որոշեց տալ Արարատեանին լիազօրութիւն, եթէ պէտք լինէր, յայտնելու, որ Հայոց Ազգ. Խորհրդի Բագուի մասնաճիւղն ևս պատրաստ է ընդունել թուրքերին ներկայացւած վերջնագրի այն կէտը, որ վերաբերւում է ազգային զօրամասերին»։

---

*) Բագուի թրքական մէկ թաղը։